ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսիի 1

№__3962-Ա___ « 30 » սեպտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՎԻԼՆՅՈՒՍ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի 26.09.2025 թվականի №Ն/56359-25 զեկուցագիրը՝ Լիտվայի Հանրապետության մայրաքաղաքում անցկացվելիք ISPCAN-ի միջազգային կոնգրեսին և «Rise Up» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանին՝ 2025 թվականի հոկտեմբերի 5-ից հոկտեմբերի 10-ը ներառյալ գործուղել Լիտվայի Հանրապետության մայրաքաղաք Վիլնյուս:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի բացակայության ընթացքում երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Գրիգորյանին:

4.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող

փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ